

---

---

**ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ  
ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ  
ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ. Ս.

«Իզոպոլ» պետություններ, կրոնական էքստրեմիզմ և միջազգային տեռորիզմ՝ այս երեք հասկացությունները 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո անքակտելիորեն միահյուսվել են հասարակության աչքերում: Դրանցից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, արդեն իսկ սպառնում է քաղաքացիական խաղաղությանը և միջազգային կայունությանը: Իսկ դրանցից բխող համատեղ չարիքը առավել գերազանցում է առանձին մասերի պարզ գումարը<sup>1</sup>: Կարծում ենք, որ այստեղ մենք գործ ունենք այնպիսի *բարդ բաղադրված կոնֆլիկտների* հետ, որոնք, ըստ Լ. Յակիմեցի և Ն. Նիկոլսկայի՝ բնորոշ են հետսոցիալիստական փոխակերպվող հասարակությանը: Քանի որ փոխակերպումը շոշափում է առանց բացառության կյանքի բոլոր կողմերը (իրավական, էթնիկական, տնտեսական, սոցիալական և այլն), ուստի ոչ միայն այդ կողմերն են փոփոխություններ կրում, այլ նաև դրանց միջև եղած հարաբերակցությունները: «Ակնհայտ է, որ այդ դինամիկ «կաթսայում» փոթորկում են ոչ այնքան առանձին մոնոկոնֆլիկտներ (սոցիալ-մշակութային, քաղաքական, վարչական, էթնո-ազգային, սոցիալ-տնտեսական), որքան, գրեթե միշտ, բարդ բաղադրված կոնֆլիկտներ»<sup>2</sup>: Ուստի հետսոցիալիստական երկրների անցումային ժամանակաշրջանին բնորոշ երևույթների առավել ընդգրկուն հետազոտությունները և լուրջ վերլուծությունների կարևորությունը չեն սահմանափակվում սովյալ տարածաշրջանի և ժամանակի հիմնահարցերը լուծելու խնդրով: Այդ ուսումնասիրությունները հրատապ և արդիական են ավելի գլոբալ աշխարհաքաղաքական իմաստով և ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական մեծ նշանակություն: Անցումային հասարակությանը բնորոշ է մի երևույթ, որը մենք անվանել ենք *ծաղրանկարի էֆեկտ*, երբ անտեսվում են դրականն ու օրինաչափը, և ընդգծվում, չափազանցվում են բացասականն ու արտասովորը, և, զուգահեռաբար ծայրահեղ, հիվանդագին դրսևորում են ստանում տարբեր իրողությունների նկատմամբ մարդկանց վերաբերմունքը իմացական, հուզական և վարքային մակարդակներում: Ըստ Յասպերսի՝ խաղաղ ժամանակներում և հեղաշրջումների ու պատերազմների ժամանակ տարբեր ձևով են դրսևորվում հոգեգարությունները (փսիխոզները) ու հոգեախտաբանությունները, իսկ անոմալ անձինք հատկապես նկատելի են դառնում հեղափոխական ժամանակաշրջաններում, որոշ դեպքերում էլ նրանք նույնիսկ առաջին պլանում են

---

<sup>1</sup> **Тетчер М.**, *Искусство управления государством. Стратегии для меняющегося мира (пер. с англ., М., 2003, с. 237).*

<sup>2</sup> **Якимец В. Н., Никовская Л. И.**, *Сложносоставные конфликты (Социологические исследования, 2005, N 8).*

հայտնվում<sup>3</sup>: Անցումային ժամանակաշրջանում ծայրահեղ դրսևորումներ ձեռք բերեցին հասարակության ենթագիտակցության մեջ երկարատև ճնշված ցանկություններն ու մղումները: Այսպես, մարդու ազատության իրավունքը դրսևորվեց ամենաթողությամբ, սեփականության իրավունքը՝ վայրի կապիտալիզմով, խոսքի ազատությունը՝ անձի արժանապատվությունը նսեմացնող գոեհկաբանությամբ, խղճի ազատությունը՝ պսևդո-հավատացյալներով:

Անցումային ժամանակաշրջանի առանձնահատկություններից են արագընթաց իրադարձությունները և դինամիկ փոփոխությունները հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում: Վերլուծելով հետսոցիալիստական տարածքի անցումային տեղաշարժերի դինամիկան ուսումնասիրող աշխատանքներում<sup>4</sup> առկա սոցիալ-հոգեբանական մոտեցումները՝ կարող ենք ընդհանրացնել, որ հետագոտողների մեծամասնությունն առանձնացնում է անցումային ժամանակաշրջանի երեք փուլ՝ 1) դրական (ոգևորության, օպտիմիզմի, էջֆորիայի, իդեալականացման, ազգային-ազատագրական), 2) բացասական (հիասթափության, սոցիալական ապակառուցողականության, անումիայի, նեգատիվիզմի, սոցիալական հեղափոխության), 3) չեզոք (իրատեսական, կայունացման, զարգացման): Պետք է նկատել, որ *նշված փուլերը քաղաքական հոգեբանության մեջ հայտնի զանգվածային տրամադրությունների պարբերաշրջանային դրսևորումներից են*: Սովորաբար զանգվածային տրամադրությունների պարբերաշրջանային զարգացումը իր մեջ ներառում է հինգ փուլ՝ տրամադրությունների խմորում և սաղմնավորում, տրամադրությունների կուտակում և բյուրեղացում, առավելագույն վերելք, հանգուցալուծում կամ անկում, որոշ ժամանակ անց ապատիա (անտարբերություն), որից հետո սկսվում է զարգացման նոր շրջապտույտ<sup>5</sup>: Ինչպես տեսնում ենք, վերջին երեք փուլը համընկնում է վերը ներկայացված փուլերին, մինչդեռ վերափոխումների հետ կապված տրամադրությունների խմորումն ու սաղմնավորումը սկսվել էին լճացման տարիների վերջին, իսկ դրանց կուտակումն ու բյուրեղացումը՝ գորբաչովյան վերակառուցման ժամանակաշրջանում: Ստորև կանդրադառնանք անցումային ժամանակաշրջանի յուրաքանչյուր փուլին բնորոշ սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններին:

Առաջին փուլում հետսոցիալիստական բոլոր երկրների համեմատ՝ Հայաստանում վերափոխումների նկատմամբ ամենաբարձր ոգևորությունն էր դիտվում: Ղարաբաղում և Հայաստանում տեղի ունեցան հարյուրհազարանոց ցույցեր ու միտինգներ, որոնք իրենց հաճախականությամբ, կազմակերպվածությամբ և զանգվածայնությամբ անգերազանցելի են ոչ միայն Խորհրդային Միությունում, այլև ողջ աշխարհում: Ղարա-

<sup>3</sup> Ясперс К., *Общая психопатология (пер. с нем.)*, М., 1997, с. 860-878.

<sup>4</sup> Տե՛ս Շպедер Ж., Элекеш Ж., Гарча И., Роберт П., *Очерк трансформации в Венгрии (Социологические исследования, 2002, N 5)*; Погосян Г., *Армянское общество в трансформации*, Е., 2003. **Հովսեփյան Ա.**, Սոցիալ-հոգեբանական տեղաշարժերը վերափոխվող Հայաստանում, »Դե-ֆակտո«, Ե., 2004: **Մարգարյան Մ.**, Ժողովրդավարական կերպարավորման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում (Հանրային կառավարում, 2006, N 1):

<sup>5</sup> Олышанский Д. В., *Политическая психология*, СПб., 2002, с. 407-408.

բաղյան շարժման գաղափարները, վերաձելով ազգային անկախության համար պայքարի, ազգային վերածննդի հիմքը դրեցին: 80-ական թվականների վերջին ընտանեկան հարաբերություններն ուսումնասիրելու նպատակով հարցումներ անցկացնելիս անձնական երջանկության վերաբերյալ մարդկանց պատասխաններում լեյտմոտիվի պես գերիշխում էին հայրենասիրական-ազատագրական զգացումները. «Ես կատարյալ երջանիկ կլինեմ, եթե Ղարաբաղի հարցը լուծված տեսնեմ», «Ես բոլորից շատ ուզում եմ Հայաստանը անկախ տեսնել»<sup>6</sup>:

Ինչպես գրում է Ա. Հովսեփյանը, «Թավշյա» հեղափոխության առաջին փուլը, որն անվանվում է ազգային զարթոնքի «մեղրամիս, բնութագրվում է մեծ էնտուզիազմով, բարձր տրամադրությամբ, պայծառ հույսերով, արժանապատվության, հպարտության զգացմունքներով և վերահաս ակնկալիքներով»<sup>7</sup>: Այս փուլն աչքի ընկավ փոխակերպվող լիդերության հեղափոխական ու հերոսական դրսևորումներով, այսինքն՝ առաջին պլան մղվեց խարիզմատիկ լիդերությունը, ինչը հետևորդների մեջ ձևավորում է նոր դրդապատճառներ, ավելի բարձր արժեքներ փորձելով բավարարել Ա. Մալոուի՝ բուրգի վերին աստիճանների պահանջումները: Լիդերները և հետևորդները լուրջ փոփոխության են ենթարկում սեփական հետաքրքրություններն ու վարքը՝ ծառայեցնելով դրանք վեհ նպատակի: Այդ փուլում զանգվածային միջոցառումների ժամանակ, իշխանությունների իսկ խոստովանությամբ, չարձանագրվեց օրինականության խախտման որևէ լուրջ դեպք, նույնիսկ ընդհանուր հանցագործությունների թվի նվազում գրանցվեց: Ենթադրում ենք, որ հասարակության ընդհանուր բարոյական զարգացման մակարդակը, Լ. Կուլբերգի տեսության համաձայն, բարձրացել էր վերին՝ երրորդ մակարդակի վեցերորդ փուլ, քանզի մարդիկ գտնում էին, որ կարելի է չենթարկվել օրենքին միայն այն դեպքում, եթե հարցը վերաբերում է ավելի բարձր սկզբունքի, քան օրենքն է, որն է ազգային անկախությունը: Ազգային-ազատագրական շարժման համամասնակցությունը և ձեռք բերած հաջողությունը նպաստեցին հայ էթնիկ խմբի սուբլիմացիային (վեհացմանը, ինքնավստեմացմանը): Ա. Հովսեփյանի կարծիքով, 80-ականների վերջերի և 90-ականների սկզբների Հայաստանի համար մարդուն բնորոշ էր կողմնորոշումը սեփական էթնոսի նկատմամբ և իր հանրության դրական տարբերությունների գերազանցատու մյուսներից<sup>8</sup>: Ժողովրդի մեջ արթնացան Նոյյան տապանի ավանդապատումների հետ կապված «ընտրյալ» ազգ լինելու զգացմունքները: Հայտնի է, որ սեփական էթնոսի՝ հատկապես ծագումնաբանական իմաստով գերազանցության մասին ունեցած պատկերացումներն ինքնավեհացման դրսևորումներ են<sup>9</sup>: Նորանկախ Հայաստանի ինչպես լիդերները, այնպես էլ ողջ հասարակությունը իրենց իդեալական ես-ը ձևավորում էին վերընթաց սոցիալական համեմատություններով, ինչն էլ ինքնակատարելագործման և նվաճման հասնելու

մոտիվա-

<sup>6</sup> Այսպիսի պատասխաններ են գրանցվել մասնավորապես Սակի անավարտ նախադասությունների թեստի շրջանակներում:

<sup>7</sup> Հովսեփյան Ա., նշվ. աշխ., էջ 100:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 125:

<sup>9</sup> Նալչաջյան Ա., էթնիկական հոգեբանություն, Ե., 2004, էջ 144:

ցիա է ստեղծում: Այսպես, սեփական երկրի ազատական և ժողովրդավարական զարգացման մակարդակը այդ ժամանակ գնահատվում էր՝ համեմատվելով Արևելյան Եվրոպային և մերձբալթյան երկրներին: Ինչպես այդ տարիներին նկատել է Է. Պաինը, նոր հասարակության ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման ու զարգացման տեսանկյունից առավել կայուն քաղաքական իրավիճակ էր ստեղծվել մերձբալթյան պետություններում, ինչպես նաև Հայաստանում<sup>10</sup>: Հեղինակի կարծիքով, դրանում մեծ ներդրում ունեն ինչպես բնակչության, այնպես էլ իշխող էլիտայի իրական ցանկությունն ու քաղաքական կամքը: Այսպիսով, անցումային ժամանակաշրջանի սկզբնական փուլում հանդես եկող խարիզմատիկ լիդերությունը՝ որպես լիդերների և հետևորդների միասնական նոր գաղափարների և նպատակների իրականացման ամբողջականություն, բացառիկ դրական դերակատարում ունեցավ ինչպես Արցախի համար մղվող պայքարում, այնպես էլ հասարակարգի վերափոխման առաջնային խնդիրների լուծման գործում:

Երկրորդ փուլում «թավշյա հեղափոխությանը» հետևեց ռեֆորմների անցկացման շոկային թերապիան: Ռեֆորմների իրականացման արագ ընթացքն ու շտապողականությունը մեծ մասամբ պայմանավորված էին կոմունիզմի վերականգնման վախով, որն ավելի ուժեղացավ ԱԻՊԿ-ի (ГКЧП) իրադարձություններից հետո: Ռուս տնտեսագետների կարծիքով, խորհրդային տարածաշրջանի և Արևելյան Եվրոպայի տնտեսական բարեփոխումների փորձը ցույց տվեց, որ փոխակերպման գործընթացը արդեն իսկ իր մեջ կրում է հզոր ճգնաժամային լիցքավորում, իսկ անցումային ճգնաժամը որակվում է որպես տնտեսական նոր ճգնաժամի այնպիսի տեսակ, որը ոչ մի ընդհանուր բան չունի վերջին 200 տարիների ընթացքում ուսումնասիրած ճգնաժամերի հետ<sup>11</sup>: Հետևաբար, նման մեծամասշտաբ ճգնաժամի դրսևորումները անկանխատեսելի էին մասնագետների համար և ամբողջությամբ անսպասելի՝ ինչպես լիդերների, այնպես էլ ժողովրդի համար: Առհասարակ, փոխակերպվող երկրներում սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետևանքով ոչ միայն ընկնում է կյանքի մակարդակը՝ շեշտակիորեն մեծացնելով աղքատների ու գործազուրկների բանակը, շատանում են սոցիալ-քաղաքական և ազգամիջյան կոնֆլիկտները, այլև տեղի են ունենում ժողովրդագրական բացասական տեղաշարժեր: Փոխակերպվող բոլոր երկրներում ծնելիության այնպիսի անկում է գրբանցվում, որ գերմանացի մասնագետները այդ երևույթը «ժողովրդագրական հեղափոխություն» անվանեցին<sup>12</sup>: Բուլղարացի հայտնի գիտնական Վ. Մանովի խոսքերով, միայն «ազգաբնակչության թվի կրճատումը, որպես բարձր մահացության և ցածր ծնելիության, ինչպես նաև արտագաղթի արդյունք, արդեն իսկ արտացոլում է տնտեսության և պետության դեգրադացիան»<sup>13</sup>:

<sup>10</sup> **Паин Э. А.**, *Становление государственной независимости и национальная консолидация России: проблемы, тенденции, альтернативы (Мир России, 1995, N 1, с. 58-90).*

<sup>11</sup> **Погосян Г.**, նշվ. աշխ., էջ 117-120:

<sup>12</sup> **Шпедер Ж., Элекеш Ж., Гарча И., Роберт П.**, ЭЯН. <sup>3</sup>ЯЛ.:

<sup>13</sup> **Манов В.**, *Реформа в постсоциалистическом обществе. Опыт Болгарии, М., 2000, с. 8.*

Երկարատև «անցումը» ավելի ծանր և դրամատիկ էր, քան ենթադրվում էր սկզբում: Ռուսաստանի բնակչության մեծամասնությունը, հարկադրաբար ենթարկվելով շոկոթերապիայի, ստացավ խոր, անբուժելի բարոյահոգեբանական խեղումներ<sup>14</sup>: Իսկ Ն. Կորովիցան, նկարագրելով Արևելյան Եվրոպայի երկրների ազատական փոխակերպման գործընթացները, նկատում է, որ «տարածաշրջանի երկրներում կատարված փոփոխությունները այնքան նշանակալից էին, որ արևելաեվրոպացի մարդու մեջ, բնականաբար, հարց էր առաջանում՝ «արդյո՞ք կա կյանք անցումից հետո»<sup>15</sup>: Վերը նշված վերլուծությունները կատարվել են ինչպես առավել հաջողված փոխակերպվող եվրոպական երկրներում, այնպես էլ նյութական ռեսուրսներով հարուստ Ռուսաստանում: Կարծում ենք, եթե Ն. Կորովիցան իր ուսումնասիրությունները անցկացներ Հայաստանում, ապա, ըստ նրա, հայաստանցիների մեջ հաստատ հարց կծագեր՝ «արդյո՞ք կյանք կա դժոխքից հետո»: Անկասկած, նորանկախ բոլոր հետկոմունիստական երկրների համեմատ, Հայաստանում վիճակն առավելագույնս վատթար էր: Հայտնի է, որ արտակարգ իրավիճակները, տարբերակման չափանիշներից ելնելով, որակվում են որպես անտրոպոգեն և բնական ճանապարհով առաջացած անբարենպաստ պայմաններ<sup>16</sup>: 1988-1994 թթ. Հայաստանում գուգահեռաբար առկա էին երկուսն էլ. ստեղծվել էր աննախադեպ արտակարգ իրավիճակ, որտեղ կրկնապատկվում էին անցումային երկրներին բնորոշ բացասական դրսևորումները: Վերջիններիս մի կողմից գումարվում էին պատերազմական գործողությունները, երկարատև շրջափակումները և դրանցից հետևող էներգետիկ ու պարենային ճգնաժամերը, մյուս կողմից՝ միայն 1988 թ. երկրաշարժը և Ադրբեջանում իրականացված հայերի կոտորածներն ու բռնագաղթերը հազարավոր մարդկանց անօթևանության և աղքատության պատճառ դարձան: Մարդիկ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով միանգամից կորցրեցին իրենց նյութական կայուն բարեկեցությունը: Անկասկած, այստեղ մենք գործ ունենք դեպրիվացիայի հետ, որ ավելի բարդ է սոցիալ-հոգեբանական հաղթահարման տեսակետից: Ինչպես նկատում է Ն. Դավիդովան, մարդիկ անցան նյութական դեպրիվացիայի այն շեմը, որը ոչ միայն դուրս է մղում նրանց բնականոն կենսակերպից, այլ նաև խզում է նրանց սովորական սոցիալական կապերը և, ըստ Ա. Մապրուի, բազային պահանջումների անբավարարվածությունը խոչընդոտում է ավելի բարձր պահանջումների բավարարմանը<sup>17</sup>: Մարդկանց գործունեության ոլորտը, նպատակների ընտրության դաշտը աստիճանաբար նեղա-նում են, և կյանքի իմաստը սահմանափակվում է գոյության միջոցների հայթայթման խնդրով: Հասարակության պահանջումները, որ անցու-

<sup>14</sup> Востриков С. В., Штрихи к социопсихополитическому «Автопортрету» (Социологические исследования, 2004, N 10).

<sup>15</sup> օ»՞լ, Кара-Мурза С. Г., Бархатные революции (Социологические исследования, 2004, N 7).

<sup>16</sup> Մկրտումյան Մ., Արտակարգ իրավիճակներում մարդկանց կենսագործունեության և հոգեկան առողջության պահպանման առանձնահատկությունները, Ե., 1999:

<sup>17</sup> Давыдова Д. Д., Депривационный подход в оценках бедности (Социологические исследования, 2003, N 6).

մային շրջանի առաջին փուլում բարձրացել էին բուրգի վերին սանդղակ, միանգամից իջան և երկար ժամանակ էլ դեռ պետք է մնային ամենաստորինի վրա: Ակադեմիկ Վ. Օսիպովի կարծիքով, ոչ միայն չիրականացան հեղաշրջման հիմնական վեհանձն նպատակներն ու խնդիրները, որոնց հիմքում ընկած էր մարդու մշակութային և նյութական բարեկեցության բարձրացումը, այլև տեղի ունեցավ հակառակը. բնակչության մեծամասնության կենսամակարդակը նշանակալի անկում ապրեց, և դա կատարվեց նշանակովի օլիգարխների և կոռումպացված չինովնիկության նեղ խմբի, պատմության մեջ նախադեպը չունեցող՝ հսկայական հարըստություն կուտակելու ֆոնի վրա<sup>18</sup>: Ստեղծված բացասական հոգեբանական մթնոլորտը առավել պատկերավոր արտահայտվեց Հայաստանում: Ինչպես նկատում է Ա. Նալչաջյանը, շատ ժողովուրդներ ազգային-ազատագրական պայքար են սկսում՝ շատ լավ իմանալով, թե ինչ տնտեսական զրկանքներ են կրելու մինչև ազատագրումն ու երկար ժամանակ դրանից հետո, իսկ տնտեսական ֆրուստրացիաներն ու սթրեսները փոխհատուցվում են ազգային հպարտությամբ: Սակայն «պետք է նկատի ունենալ, որ ազգային ընտրանին (էլիտան), այդպիսի պայքար ծավալելով, ստանում է ոչ միայն իշխանություն, այլև տնտեսական օգուտ: Այն սովորաբար քիչ է տառապում տնտեսական դժվարություններից»:

Երկրորդ փուլում մի կողմից դրսևորվեցին խարիզմատիկ լիդերությանը բնորոշ երեք հիմնական վտանգավոր կողմերը՝ անհրաժեշտ ռեսուրսների թերըմբռնումը, կառավարչական հմտությունների պակասը և նարցիսականությունը, մյուս կողմից՝ նրանց հետևորդների բացասական առանձնահատկությունները, որոնք, դժվարությունները տեսնելով, չեն սատարում լիդերներին, մոռանում են հաղթանակները և հեռանում նրանցից՝ դարձնելով նրանց ագրեսիայի օբյեկտ և քավության նոխազ: Եթե առաջին փուլում մարդիկ գիտակցում ու պատրաստ էին, որ հանուն ազատության պետք է տնտեսական զոհողություններ կրեն, ապա երկրորդ փուլում, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, շատերը, հայտնվելով իմացական աններդաշնակության հոգեվիճակում, պատրաստ էին հրաժարվել անկախությունից: Այսպես, տնտեսական և քաղաքական ճգնաժամը ուղեկցվեց հասարակության սոցիալ-հոգեբանական ճգնաժամով, որը արտահայտվում է ներքին կոնֆլիկտներով, իմացական աններդաշնակությամբ և քրոնիկ ֆրուստրացվածությամբ: Ուստի, ինչպես ամբողջ հասարակության, այնպես էլ նրա մոդալ<sup>19</sup> անձնավորության մեջ ձևավորվում են հարմարվողական նոր ռազմավարություններ և հոգեբանական պաշտպանական բարդություններ: Հայաստանում հիմնականում դրսևորվեցին այնպիսի հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ, ինչպիսիք են՝ ագրեսիայի տարբեր տեսակները (ագրեսիայի ձևափոխում, հակասուբլիմացիա, ագրեսիայի տեղափոխում՝ քավության նոխազի որոնումներով) և հոգեբանական նահանջի (ռեգրեսիայի) երկու տեսակները՝ փախուստը (էսկապիզմը)՝ նումադիզմի ձևով, և կարոտախտը: Ագրեսիայի

---

<sup>18</sup> **Осипов Г. В.**, *Российская социология в XXI веке. Доклад на II Всероссийском социологическом конгрессе, 30 сентября – 2 октября 2003 года, М., 2003, с. 30.*  
<sup>19</sup> Հասարակության մեջ անձի տարածված, մեծաքանակ տիպը, ըստ Կ. Դյուբուայի հայնցակարգի, տե՛ս, **DuBois C.** *The People of Alor. N.Y.: Harper Row, 1961.*

ձևափոխումը հանդես եկավ միջէթնիկ ագրեսիայից ներէթնիկին՝ ձևափոխվելու համատեքստում: Այս երևույթը հատուկ է հետպատերազմյան ժամանակաշրջաններին՝ կապված գորացրված զինվորների հոգեբանական առանձնահատկությունների հետ, որոնք ձևավորվում են պատերազմական դաժան իրողություններում: Պատերազմից հետո հանրությունը իր բոլոր զրկանքներում մեղադրեց նախկինում իր սիրած և ընտրած լիդերներին: Բարձր գնահատելով Ա. Հովսեփյանի՝ անցումային ժամանակաշրջանի վերլուծությունները՝ չենք կարող համաձայնվել նրա հետ այն հարցում, որ «ավանդաբար մութ ու ցուրտ տարիներ համարվող տարիներին ժողովուրդը ըմբռնումով մոտեցավ»<sup>20</sup>: Եթե Լենինգրադի բռնկադայի տարիներին հազարավոր մարդիկ մահացան սովից ու ցրտից, և բոլորը դրանում մեղադրում էին պատերազմը հրահրած գերմանացի ֆաշիստներին, ապա Հայաստանի դեպքում ժողովուրդը միայն մեղադրեց լիդերներին՝ դարձնելով նրանց քավության նոխազ: Հայտնի է, որ սիրված լիդերներին ագրեսիայի օբյեկտ ու քավության նոխազ դարձնելը նույնպես խարիզմատիկ լիդերությանն ուղեկցող երևույթներից է: «Քավության նոխազ»-ի հետ համատեղ ակտիվացավ հակավեհացում (հակասուբլիմացիա) պաշտպանական մեխանիզմը՝ լիդերների անձի արժանապատվությունը նսեմացնող գոեհկաբանությունների, բամբասանքների, վարկաբեկումների ձևերով և «սև» ու «գունավոր» PR-ի բոլոր հնարավոր մեթոդներով: Հակավեհացումը իր ծայրահեղ դրսևորումը ստացավ հոկտեմբերի 27-ի հանցագործությամբ, որի հիմնական թիրախը Վ. Սարգսյանն էր՝ պատերազմի հաղթանակի գործում առանցքային դերակատարում ունեցող խարիզմատիկ լիդերը:

Հոգեբանական նահանջը փախուստի ձևով իր արտահայտությունը գտավ արտագաղթի մեջ՝ «որտեղ հաց, այնտեղ կաց» ռացիոնալիզատորական կարծրատիպի ակտիվացմամբ: Նոմադիզմի դրսևորումը, որպես ֆրոնտաբաններից ու սթրեսներից փախչելու, ազատվելու պաշտպանական մեխանիզմ, ըստ Ա.Նալչաջյանի, ինչքան էլ դառը հնչի, բնորոշ է հայ էթնոսի ներկայացուցիչներին<sup>21</sup>:

Հետկոմունիստական բոլոր երկրներում հոգեբանական նահանջի դրսևորման տարածված մյուս ձևը կարոտախտն էր: Հունգարացի սոցիոլոգների նկատառումներով (մեր կարծիքով՝ սուբյեկտիվ), 90-ականների սկզբին, բոլոր փոխակերպվող ժողովուրդների համեմատ, հունգարացիները առավել պակաս էին բավարարված քաղաքական ու տնտեսական փոփոխություններով, և տարածված էր «կարոտախտը» նախկին համակարգի նկատմամբ<sup>22</sup>: Իդեալականացնելով անցյալը՝ նախորդ սոցիալ-քաղաքական համակարգին վերագրվում էին այնպիսի առաքինություններ ու արժանիքներ, որոնք իրականում չեն եղել կամ եղել են մասամբ: Սակայն մարդական, հատկապես ավագ սերնդի ներկայացուցիչների խորհրդային կարոտախտը ուներ նաև բնականոն հոգեբանական պատճառներ, քանզի խորհրդային տարիներին էր անցել նրանց երիտասարդու-

<sup>20</sup> Հովսեփյան Ա., նշվ. աշխ., էջ 103:

<sup>21</sup> Նալչաջյան Ա., նշվ. աշխ., էջ 117:

<sup>22</sup> Шпедер Ж., Элекеш Ж., Гарча И., Роберт П., ЭЯн. 3ЯЛ.:

թյունը: «Այսօր շատերը հոգեբանորեն չեն հասկանում կոմունիզմի նրկատմամբ կարոտախտի պատճառները, ես սիրում եմ իմ անցյալը, որովհետև այն ժամանակ երիտասարդ էի, չնայած որ միշտ էլ ատել եմ կոմունիզմը», - խոստովանել է հայտնի հակակոմունիստ Լև Վալենսիան:

Անկախ կարոտախտի պատճառներից՝ վերջինիս վառ արտահայտված դրսևորումներից էր նույն ժողովրդի կողմից նախկինում մերժված Կարեն Դեմիրճյանի փայլուն հաղթանակի ֆենոմենը: Դեռահասի նման ազատություն տենչալով՝ ժողովուրդը կարծես հեռացել էր իր «ծնողից», իսկ դրժվարությունների, կարիքների ու զրկանքների հանդիպելով, ինչպես «անառակ որդին», վերադարձավ իր հոր մոտ: Ըստ ավետարանի, հայրը ներելով նրան, ասաց. «Պետք է ուտենք և ուրախանանք...» (Ղուկաս, 15, 11-32): Ուշագրավ է, որ ժողովրդի և Կ. Դեմիրճյանի հանդիպումներն ուղեկցվում էին կերուխումով և ուրախությամբ: Հետագայում, Վ. Սարգրայան և Կ. Դեմիրճյան դաշինքում մարդիկ կարծես թե ենթագիտակցորեն վերագտնում էին անցյալի ու ներկայի միջև կապի խզման հետևանքով իրենց կորցրած էգո-նույնականությունը: Իսկ հասարակության տրամադրություններին բնորոշ հիասթափության և անորոշության զգացմունքները ինչ-որ չափով վերափոխվեցին ապագայի նկատմամբ հույսի ու լավատեսության: Ի դեմս Կ. Դեմիրճյանի՝ ժողովուրդը գտավ իր նոր խարիզմատիկ՝ այս անգամ սրբապատկերային լիդերին: Ինչպես ենթադրում է Ռ. Իովելը<sup>23</sup>, այս տիպի լիդերներին սատարումը հիմնվում է այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են նրա կարիերայի հաջողությունները անցյալում: Սրբապատկերային լիդերները օժտված են լիդերությանը անհրաժեշտ հատուկ որակներով, սակայն չեն ձգտում արմատական փոփոխությունների և առաքելության. կողմնակիցները նույնպես նրանցից մեծ առաքելություն չեն սպասում: Ըստ Ռ. Իովելի՝ սրբապատկերային լիդերները աչքի են ընկնում վայելչատեսությամբ, միևնույն ժամանակ հանդես են գալիս տեխնոկրատի, հոր և այլ կերպարներով: Կ. Դեմիրճյանի դեպքում խարիզմատիկ լիդերությանը բնորոշ հետևորդների տրանսֆերներից (ի դեմս Կ. Դեմիրճյանի՝ նրանք տեսնում էին իմաստուն և հոգատար հորը) բացի, մենք հանդիպեցինք լիդերի ընտրության մի նոր երևույթի՝ կապված կրկնակի տրանսֆերի հետ: Այն արտահայտվեց Կարեն Դեմիրճյանի մահվանից հետո նրա որդու՝ Ստեփան Դեմիրճյանի բարձր ժողովրդականությամբ: Մարդիկ իրենց հույսն ու լավատեսությունն այնքան շատ էին կապում հայր Դեմիրճյանի հետ, որ նրա մահվանից հետո այդ կապը տեղափոխեցին որդու վրա: Այդ գործում, «սրբապատկերային» էֆեկտի շնորհիվ, մեծ դեր խաղաց որդու և հոր արտաքին նմանությունը:

Այսպիսով, հայաստանյան անցումային հասարակությունում կրկնվեցին առաջին փուլին բնորոշ, ճիշտ է, համեմատաբար ավելի չափավոր, ոգևորության տրամադրությունները և խարիզմատիկ լիդերության դրսևորումները: Հետևաբար, առաջարկում ենք Հայաստանին բնորոշ անցումային ժամանակաշրջանի փուլային նոր շերտադասավորություն, որը

---

<sup>23</sup> **Итвел Р.**, *Возрождение харизмы? Теория и проблемы операционализации понятий (Социологические исследования, 2003, N 3).*



զարգանում և ձևափոխվում է հասարակական տրամադրությունների տարբեր ինտենսիվության վերելքների և վայրէջքների հերթափոխից մինչև ապատիայի հասնող անտարբերություն. 1) դրական՝ *ճայրահեղ բարձր վերելքի* (մեծ ոգևորության, իդեալականացման, էֆորիայի, ազգային ազատագրական), 2) բացասական՝ *ճայրահեղ ցածր անկման* (մեծ հիասթափության, անոմիայի, նեգատիվիզմի, սոցիալական հեղափոխության), 3) դրական՝ *չափավոր վերելքի* (ոգևորության, հույսի, չափավոր օպտիմիզմի), 4) բացասական՝ *չափավոր անկման* (հուսախաբության և վախի), 5-չեզոք (իրատեսության, ապատիայի):


Կարծում ենք, անցումային հասարակությունում գործնականում դրսևավորվեց հանճարեղ հոգեբան Է. Ֆրոմմի<sup>24</sup> կողմից առաջ քաշված «ազատություն-պաշտպանվածություն» երկփեղկման հայեցակարգը՝ հասարակության սոցիալական պաշտպանվածության և ազատությունից հրաժարվելու փոխկախվածության մասին: Քանի որ ազատության ձեռքբերման հետ կապված բացասական երևույթները և դրանց համարժեք հոգեվիճակները գերիշխում էին անցումային հասարակության մոդալ անձի մեջ, ապա նա ձգտում է փախչել ազատությունից դեպի անազատ անցյալ, որտեղ իրեն պաշտպանված էր զգում, դեպի ավտորիտար լիդերները, ովքեր, մարդկանց զրկելով որոշումներ ընդունելու և ընտրություն կատարելու հնարավորությունից, միառժամանակ վերջիններիս ձեռքազատում են իմացական աններդաշնակության և տարբեր ներքին կոնֆլիկտներից: Այս համատեքստում դրական դեր կարող էր ունենալ Կ. Դեմիտրճյանի և Վ. Սարգսյանի անսպասելի դաշինքը, որը, ինչպես նկատում է Գ. Պողոսյանը, խորհրդանշում էր այդ ժամանակաշրջանի հասարակության՝ մի կողմից կոմունիստական կարոտախտը, մյուս կողմից՝ ուժեղ իշխանություն ունենալու ձգտումը<sup>25</sup>: Մինչդեռ Ազգային ժողովում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունը սահմանագծային դարձավ հասարակության սոցիալ-հոգեբանական տրամադրությունների փոփոխության համար: Սպանվեցին ոչ միայն սիրված լիդերները, այլ նաև ժողովրդի լավատեսության ու հույսի զգացումները: Վերջիններիս փոխարինեցին վախի և տագնապայնության այնպիսի զգացումներ, որոնք սովորաբար առաջանում են բոլոր տեսակի ահաբեկչական գործողություններից հետո: Գերիշխեցին ահաբեկչական գործողությունների հետևանքով սովորաբար առաջացող ընդհանուր վախի ու տագնապային տրամադրությունների այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք նկատել են Վ. Իվանովան և Բ. Շուբկինը. «Հիմնականում վախը մարդկանց մղում է գործողության, երբ այն շոշափում է անձնական շահերը, սակայն եթե վտանգը վերաբերում է հասարակությանը, այլ ոչ առանձին մարդուն կամ նրա ընտանիքին, մարդիկ հաճախ դառնում են պասսիվ»<sup>26</sup>: Անցումային հասարակության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների զարգացման դինամիկան ամբողջությամբ համապատասխանում է Է. Ֆրոմմի՝ ազատություն-

<sup>24</sup> **Фромм Э.**, *Бегство от свободы*, Киеви 1994.

<sup>25</sup> **Погосян Г.**, նշվ. աշխ., էջ 364-365:

<sup>26</sup> **Иванова В., Шубкин В.**, *Массовая тревожность россиян как припятствие интеграции общества* (Социологические исследования, 2005, N 2).

նից փախչող հասարակության սոցիալական բնավորության փոխակերպումներին: Անցումային ժամանակաշրջանի փուլերին համապատասխան՝ հերթականությամբ իրար հաջորդեցին ազատությունից փախչող հասարակության սոցիալական բնավորության դրսևորումները. 1) ազատության ձգտում, 2) անգորության ու անպաշտպանվածության զգացում, 3) պաշտպանված լինելու ցանկություն, 4) հնազանդություն և կախվածություն, 5) կոմֆորմիզմ և ավտորիտարիզմ:



Պարադոքսային է, բայց հասարակությունը, չնայած ցանկանում էր, սակայն պատրաստ չէր ապրելու ժողովրդավարական, քաղաքացիական հասարակության պայմաններում: Ինչպես իր գրքի վերջաբանում գրում է Մ. Թետչերը, բարձրորակ ժողովրդավարական ինստիտուտներն ինքնըստինքյան չեն երաշխավորում ժողովրդավարություն, ինչն ապացուցում են այն հասարակությունները, որտեղ պայմաններ չկան ազատության սերմեր աճեցնելու համար, և որի հետևանքով այդ ինստիտուտները դառնում են անօգտակար, նույնիսկ վտանգավոր<sup>27</sup>: Հեղինակը արդարացիորեն նշում է, որ ազատության արմատավորման համար անհրաժեշտ է մարդկանց կրիտիկական զանգված, ովքեր իսկապես հասկանում են, թե ինչ է այն, այլ

<sup>27</sup> Тетчер М., նշվ., աշխ:

կերպ ասած սկզբում առաջանում են ազատ մարդիկ, իսկ դրանից հետո արդեն հայտնվում է ազատ քաղաքական, տնտեսական և սոցիալական հասարակարգը:

Այսօր նոր սերունդ է մեծանում, որը մի կողմից չի ժառանգել կոմունիստական ամբողջատիրական հասարակարգի բարդությունները, մյուս կողմից էլ՝ փոխակերպվող հասարակության սկզբնական շրջանի ազատական գաղափարախոսության իդեալականացման էյֆորիան: Ըստ սոցիոլոգիական հարցումների՝ երիտասարդները առավել հակված են ժողովրդավարական արժեքների<sup>28</sup>: Մեր դիտումները (առանձին ուսումնական հաստատությունում) նույնպես ցույց տվեցին, որ ղեկավարների կոշտ ավտորիտար ոճին, ուսանողները, ի տարբերություն աշխատակազմի, ոչ միայն ընդդիմանում են, այլև կարողանում են հնարավոր միջոցներով պաշտպանել սեփական իրավունքները: Վերջինս էլ լավատեսություն է սփռում, որ նման երիտասարդներից կձևավորվի, Մ. Թեոչերի եզրույթաբանությամբ, այն «կրիտիկական զանգվածը», որը կապահովի անցումը ժողովրդավարական հարաբերությունների ստեղծման տեսանկյունից կայացած փուլին:

### СТАДИИ РАЗВИТИЯ ПЕРЕХОДНОГО ПЕРИОДА И ПСИХОЛОГИЧЕСКИЕ ЗАЩИТНЫЕ МЕХАНИЗМЫ В ТРАНСФОРМИРУЮЩЕМСЯ ОБЩЕСТВЕ

АРУТЮНЯН Г. С.

#### Резюме

Предлагаемая новая стратификация этапов переходного периода основана на общих закономерностях циклического развития общественных настроений. Основными психологическими защитными механизмами транзитной модальной личности являются различные типы агрессий (преобразование, трансфер, антисублимация) и регрессия, с проявлением ностальгии и ностальгии. Социально-психологические особенности лидеров и их последователей, механизмы их взаимодействия и трансформация взаимоотношений имеют ситуативную динамику в соответствии с этапами развития переходного периода. Динамика развития социально-психологических особенностей переходного общества протекает по модели концепции Э. Фромма о дихотомии «свобода-защищенность», подразумевающей стремление к свободе, чувство бессилия и незащищенности, желание быть защищенным, подчинение и зависимость, конформизм и авторитаризм.

<sup>28</sup> Погосян Г., նշվ., աշխ., էջ 365: